

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 19-ի N 1364 - Ա որոշման

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ	MEMORANDUM OF UNDERSTANDING
<p>Սույն Փոխըմբռնման Հուշագիրը (հետայսու՝ ՓՀ), ստորագրված 2015 թվականին, կանոնակարգվել է Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների և «ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա գլխավոր տնօրեն և ներկայացուցիչ Ջիովաննի Ռուբինիի միջև տեղի ունեցած հանդիպումների արդյունքում:</p> <p>Վերոնշյալ հանդիպումների ընթացքում Կողմերը հաստատել են Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքի մոտակայքում «Համակցված Շոգեգազային ցիկլով», 234 մՎտ ընդհանուր հզորությամբ և ոչ պակաս 50,5% ընդհանուր ՕԳԳ ապահովող (արժեքները հաշվարկված են Երևանի պայմաններում) էլեկտրաէներգիա արտադրող նոր էլեկտրակայանի (հետայսու՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ) աշխատանքների իրականացման վերաբերյալ համագործակցության հնարավորությունը:</p> <p>Էլեկտրակայանը պետք է նախագծվի և կառուցվի սույն ՓՀ-ին կից և նրա անբաժանելի մասը կազմող Հավելված 1 հանդիսացող տեխնիկական առաջադրանքի (TOR) հիմնական տեխնիկական պայմաններին համապատասխան:</p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչները հետաքրքրվածություն են ցուցաբերել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ իրականացման նկատմամբ՝ հաշվի առնելով</p>	<p>The present memorandum of understanding (hereinafter referred to as “MOU”), dated as of ... 2015, has been regulated following the meetings held between the representatives of the Government of the Republic of Armenia and CEO and legal representative of Renco S.p.A Dr. Giovanni Rubini.</p> <p>During the above mentioned meetings the Parties have verified the possibility to collaborate for the realization of a new “combined cycle” power plant (hereinafter referred to as the “POWER PLANT”) for electric energy production with 234 MW gross capacity and with not less than 50,5% gross efficiency (the values are calculated based on Yerevan site conditions) near Yerevan city, Republic of Armenia.</p> <p>The Power Plant shall be designed and constructed based on the main technical requirements, stipulated in Terms of Reference (TOR), that constitutes Annex 1, the inseparable part of this MOU.</p> <p>The representatives of the Government of the Republic of Armenia have demonstrated their interest for the realization of the POWER PLANT, taking into consideration the registered</p>

<p>Հայաստանում ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված և կառավարման առավել ցածր ծախսեր պահանջող էլեկտրաէներգիայի արտադրության նկատմամբ արձանագրված կայուն և աճող պահանջարկը:</p> <p>Հետևաբար, գնահատվեց հնարավոր համագործակցությունը «ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա-ի հետ, որը նշանակալի փորձ ունի երկրում հաջողությամբ իրականացնելով կարևոր նախագծեր, և որն ունի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները:</p> <p>«ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա.-ն նույնպես իր հետաքրքրվածությունն է արտահայտել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ իրականացման և հետագա սպասարկման վերաբերյալ՝ հանձն առնելով այդպիսի նախագծի իրականանալիությունը ստուգել նաև վստահելի տեխնոլոգիական և ֆինանսական գործընկերների ներգրավման միջոցով, որոնց հետ ՌԵՆԿՈՆ մտադիր է հիմնադրել նոր հայկական ընկերություն, որի նպատակը կլինի վերոնշյալ նախագծի իրականացումը:</p> <p>Հաշվի առնելով վերոնշյալը՝ Կողմերը վերահաստատում են ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ նախագծի իրականացման նպատակով համագործակցելու իրենց փոխադարձ հետաքրքրվածությունը՝ ստորև նշված ժամկետներում և ստորև նշված պայմանների հիման վրա, և համաձայնության են գալիս հետևյալի վերաբերյալ.</p> <p>1. ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</p> <p>Այս ՓՀ-ի ստորագրումից հետո կողմերը պետք է ակտիվորեն, սերտորեն և</p>	<p>constant and growing demand for the generation of electric energy in Armenia based on state-of-the-art technologies and the related lower costs of management.</p> <p>Therefore, there has been evaluated the possible collaboration with Renco S.p.A company, which has developed significant experience in the Country where it has successfully implemented important projects and possesses the necessary technical and financial capabilities for the realization of the POWER PLANT.</p> <p>Renco S.p.A company has equally demonstrated its interest for the realization and subsequent maintenance of the POWER PLANT, undertaking to verify the feasibility of that project, also by means of involving reliable technological and financial partners with whom RENCO has the intention to constitute a new Armenian company, dedicated to the realization of the above mentioned project.</p> <p>In the light of the above statement, the Parties confirm their mutual interest to collaborate for the realization of the POWER PLANT project, on the basis of the terms and conditions defined here below and agree upon the following:</p> <p>1. SUBJECT OF THE AGREEMENT</p> <p>Following the conclusion of the present MOU, the Parties shall actively and strictly cooperate</p>
--	---

<p>բարեխղճորեն համագործակցեն ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ նախագիծը մշակելու նպատակով: Մասնավորապես, «ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա.-ն պարտավորվում է ստուգել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՆ վերաբերող նախագծի իրականանալիությունը և ձեռնարկել բոլոր ողջամիտ միջոցները համապատասխան ֆինանսական գործիքները սահմանելու համար՝ ստուգելով դրանց իրականանալիությունը և բոլոր անհրաժեշտ գործողություններն իրականացնելով ոչ ուշ, քան սույն ՓՀ-ի ուժի մեջ մտնելու օրվանից չորս ամսվա ընթացքում:</p> <p>Եթե այդ ժամկետի ընթացքում ՌԵՆԿՈ Ս.պ.Ա.-ն հավաստիանա նախագծի անիրականանալիության մասին, ապա պարտավորվում է գրավոր կերպով տեղեկացնել այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության (հետայսու՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ) ներկայացուցիչներին, և սույն համաձայնագիրը կհամարվի կատարված (իրականացված) առանց երկու ԿՈՂՄԵՐԻ համար որևէ պարտավորվածության:</p> <p>Այլապես, այն դեպքում, երբ ՌԵՆԿՈ Ս.պ.Ա.-ն պայմանավորված ժամկետի ընթացքում գրավոր հաստատում է նախագծի իրականացման նպատակահարմարության մասին, ինչպես նաև նշված ծրագրում իր հանդես գալու ցանկության և պատրաստակամության մասին, ապա ՌԵՆԿՈ Ս.պ.Ա.-ն ինքնուրույն կամ այլ գործընկերների հետ միասին Հայաստանի Հանրապետությունում կարող են հիմնել առևտրային կազմակերպություն (ՌԵՆԿՈ Ս.պ.Ա.-ն և նրա հիմնած կազմակերպությունը հետայսու՝ ՌԵՆԿՈ), իսկ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՌԵՆԿՈՆ</p>	<p>in good faith for the purpose of developing the project of POWER PLANT. In particular, RENCO S.p.A company undertakes to verify the feasibility of the project concerning the POWER PLANT and undertake all reasonable means to define the appropriate financial instruments, verifying their feasibility, performing all the necessary activities within the period not exceeding the four months from the date of entry into force of the present MOU.</p> <p>If within this period RENCO S.p.A. verifies the non-feasibility of the project, then the same company shall communicate it to the representatives of the Government of the Republic of Armenia (hereinafter referred to as the GOVERNMENT), by means of written notification, and the present agreement will be considered executed without any obligation for both Parties.</p> <p>Otherwise, if RENCO S.p.A. within the agreed period confirms in writing the feasibility of the project and its interest and readiness to undertake the project, RENCO S.p.A solely or with partners can found a Commercial company in the Republic of Armenia (RENCO S.p.A. and its subsidiary company hereinafter referred to as RENCO) and the GOVERNMENT and RENCO (hereinafter jointly referred to as PARTIES and separately as a PARTY) undertake to conclude a final contract (hereinafter: “CONTRACT”) for the construction of power plant, provided that the GOVERNMENT undertakes to conclude a CONTRACT with RENCO S.p.A or subsidiary of</p>
--	--

<p>(հետայսու միասին հիշատակման ժամանակ ԿՈՂՄԵՐ, իսկ առանձին հիշատակման ժամանակ՝ և ԿՈՂՄ) պարտավորվում են ստորագրել Էլեկտրակայանի կառուցման վերաբերյալ վերջնական պայմանագիր (հետայսու՝ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ), ընդ որում Կառավարությունը պարտավորվում է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ կնքել ՌԵՆԿՈ Ս.պ.Ա.-ի կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված նրա դուստր Ընկերության հետ: ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ պետք է հիմնված լինի հետևյալ դրույթների և պայմանների վրա, որոնք կողմերը հայտարարում են պայմանագրի համար էական նշանակություն ունեցող (երաշխիքներ).</p> <p>ա) ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է աջակցել ՌԵՆԿՈՅԻՆ ձեռք բերել հողատարածքը, որտեղ կկառուցվի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ: Այդ հողատարածքը գտնվում է Երևան քաղաքի մոտակայքում՝ գոյություն ունեցող Էլեկտրակայանին հարող տարածքում, որը ներկայումս կառավարվում է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից:</p> <p>ՌԵՆԿՈՆ պարտավորվում է Էլեկտրակայանի գլխավոր հատակագիծը նախագծել այնպես, որ հնարավորինս առավելագույնս օպտիմալ օգտագործվի ներկայումս Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ին պատկանող հողատարածքը: Էլեկտրակայանի գլխավոր հատակագծի նախագիծը պետք է համաձայնեցվի Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ի հետ:</p> <p>ՌԵՆԿՈՆ պարտավորվում է Էլեկտրակայանի կառուցման ավարտից հետո 3 (երեք) ամսվա ժամկետում մաքրել ՌԵՆԿՈՅԻՆ կողմից կառուցված</p>	<p>RENCO S.p.A founded in the Republic of Armenia. The CONTRACT shall be based on the following terms and conditions which parties qualify as essential (warranties):</p> <p>a) The GOVERNMENT undertakes to assist RENCO in the purchase of the land on which the POWER PLANT will be constructed. This land is located in the vicinity of Yerevan city, in the area adjacent to the existing POWER PLANT currently managed by the “Yerevan TPP” CJSC.</p> <p>RENCO undertakes to design the general layout of the POWER PLANT in such a manner, that the land currently belonging to “Yerevan TPP” CJSC could be used at maximum optimal level. The design of general layout of the POWER PLANT shall be agreed with “Yerevan TPP” CJSC.</p> <p>RENCO undertakes within three (3) months after completion of power plant construction to clean the area occupied by the POWER PLANT, constructed by</p>
---	---

<p>Էլեկտրակայանի գրադեցրած տարածքը:</p> <p>բ) ՌԵՆԿՈՆ պարտավորվում է իր հաշվին կառուցել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ համապատասխան ժամանակահատվածում, որն ամեն դեպքում չի գերազանցի 30 (երեսուն)-ամիսը՝ սկսած այն պահից, երբ կստորագրվի կառուցման Պայմանագիրը և կտրամադրվի տարածքը: Սույն ժամանակահատվածի հնարավոր բարելավումները կհամաձայնեցվեն կողմերի միջև՝ նախքան աշխատանքների սկիզբը: Այնուհետև ՌԵՆԿՈՆ պարտավորվում է իրականացնել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ սպասարկման համար անհրաժեշտ գործողությունները վերջինիս ողջ գործունեության ընթացքում:</p> <p>գ) ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է քսան (20) տարի սահմանված ժամկետում՝ սկսած ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ ավարտին հասցնելու օրից, երաշխավորել ՌԵՆԿՈՅԻՆ Էլեկտրաէներգիայի արտադրման համար ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՆ անհրաժեշտ գազի մատակարարումը, որը պետք է պայմանավորված լինի ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքային բեռի գրաֆիկներով: Բոլոր դեպքերում էլեկտրակայանի աշխատանքի համար անհրաժեշտ բնական գազի, տեխնոլոգիական ջրի, արտանետվող կոյուղաջրերի, այլ պայմանագրերը պետք է ստորագրվեն ՌԵՆԿՈՅԻ և համապատասխան մատակարար ընկերությունների միջև: ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է օժանդակել վերոնշյալ, ինչպես նաև</p>	<p>RENCO.</p> <p>b) RENCO at its own expense undertakes to implement the POWER PLANT, within an appropriate period of time, which in any case will not be more than 30 (thirty) months starting from the date of signing of construction Contract and making available the area. The possible optimizations of this period will be agreed upon by the parties before starting the works. Subsequently, RENCO undertakes to perform the necessary activities of maintenance of the POWER PLANT for the whole duration of its operation.</p> <p>c) The GOVERNMENT undertakes to guarantee to RENCO, for the period of twenty (20) years from the completion date of the POWER PLANT, the supply of gas necessary for the POWER PLANT for the production of the electric energy, which shall be conditioned by operating load regimes of power system of the Republic of Armenia. In any case, the contracts for the natural gas, technological water, discharged waste water, etc. required for POWER PLANT operation shall be signed between RENCO and respective supply companies. The GOVERNMENT undertakes to facilitate the formal practices necessary for dealing with these activities and also those related to the construction permissions.</p>
---	---

շինարարության թույլտվությունների հետ կապված գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ պաշտոնական գործընթացները:

Էլեկտրակայանի առավելագույն հզորությանը համապատասխան բնական գազի ծախսը կկազմի 45,680 նմ³/ժամ (քառասունհինգ հազար վեց հարյուր ութսուն նմ³/ժամ) կամ 365,434,116 նմ³/տարի (երեք հարյուր վաթսունհինգ միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար մեկ հարյուր տասնվեց նմ³/տարի):

Կողմերը պայմանավորվում են, որ Ռենկո-ին վաճառվելիք բնական գազի գինը կսահմանվի 230.8167 (երկու հարյուր երեսուն ԱՄՆ դոլար և ութսունմեկ տասնորդական կետ վաթսույոթ ցենտ) յուրաքանչյուր 1.000 (հազար) նմ³-ի համար, գումարած ՀՀ-ում գործող հարկերը, տուրքերը և այլ վճարումները, եթե դրանք լինեն:

Քսան (20) տարի սահմանված ժամկետում՝ սկսած ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ ավարտին հասցնելու օրից, ա. ՌԵՆԿՈՆ պարտավորվում է ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով վաճառել ողջ էլեկտրաէներգիան, որը կարտադրվի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ կողմից, բ. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ երաշխավորում է արտադրված ողջ էլեկտրաէներգիայի գնումը և գ. էլեկտրակայանի արտադրած էլեկտրաէներգիայի (մաքուր առաքում) սակագինը սահմանվում է 6.62 (վեց ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) ԱՄՆ դոլար ցենտ 1 կՎտ.ժ-ի համար՝ գումարած ԱԱՀ և

The natural gas consumption at the maximum capacity of the POWER PLANT will be 45,680 nm³/hour (forty-five thousand six hundred eighty nm³/hour), or 365,434,116 nm³/year (three hundred sixty-five million four hundred thirty-four thousand one hundred sixteen nm³/year).

The PARTIES agree that the price for the gas to be sold to RENCO shall be 230.8167 (two hundred thirty USD and eighty one decimal point sixty seven cents) for each 1.000 (one thousand) nm³ of gas, plus taxes, levies and other payments (if any) effective in Armenia.

For the period of twenty (20) years from the completion date of the POWER PLANT
 a. RENCO undertakes to cede the whole electric energy produced by the POWER PLANT in the manner established by RA legislation or RA GOVERNMENT, b. RA GOVERNMENT guarantees the purchase of the whole produced electric energy, and c. the tariff for electricity produced in the POWER PLANT (net export) shall be 6.62 (six point sixty-two) US DOLLAR CENT for a KWhour plus VAT and any further direct tax or direct levy.

<p>ցանկացած լրացուցիչ ուղղակի հարկ կամ ուղղակի տուրք:</p> <p>Կողմերը իրավունք են վերապահում իրենց հետագայում դիտարկել գազ էլեկտրաէներգիայի դիմաց փոխանակման սխեմաների ուրվագծում ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ներառման հարցը և ստորագրել համապատասխան պայմանագիր դրա վերաբերյալ:</p> <p>դ) Բացի այդ սահմանվում է, որ էլեկտրաէներգիայի վաճառքի սակագինը կվերահաշվարկվի բնական գազի սակագների փոփոխության դեպքում՝ 1-ը 0.75 հարաբերակցությամբ համապատասխանեցմամբ՝ գազի գնի փոփոխությանը համապատասխան:</p> <p>ե) Եթե ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ չի հետևում գազի մատակարարմանը վերաբերող իր պարտավորություններին՝ ոչ ՌԵՆԿՈՅԻ մեղքով, և գազի մատակարարումը ընդհատվել է կուտակային սկզբունքով երեք օրը գերազանցող ժամկետով ցանկացած օրացուցային ամսում կամ 12 օրը գերազանցող ժամկետով ցանկացած օրացուցային տարում, ապա ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է կամ՝</p> <p>-ա. Երաշխավորել ՌԵՆԿՈՅԻՆ փոխհատուցման վճարում գազի մատակարարման բացակայության յուրաքանչյուր օրվա դիմաց, որը հավասար է 0.0212 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ անգամ էներգետիկ հաշվեկշռով նախատեսված</p>	<p>The Parties reserve the right to consider the inclusion of the POWER PLANT in the prospect of gas-electricity counter delivery schemes and conclude a relevant contract regarding it.</p> <p>d) Furthermore, it is stated that electricity sale tariff shall be recalculated in case of changes in natural gas tariff with adjustment of 1 to 0.75, in compliance with the change of the gas price.</p> <p>e) In case the GOVERNMENT doesn't comply with its obligations concerning the gas supply, due to no fault of RENCO, and gas supply was interrupted on a cumulative basis for more than three days in any given calendar month or more than 12 days in any calendar year, then the GOVERNMENT undertakes either</p> <p>- a. to guarantee to RENCO the payment of compensation for each day of the absence of gas supply, which is equal to 0.0212 USD each KWh x daily production of energy envisaged in the energy balance, plus VAT, if it's due, or</p>
--	--

<p>էլեկտրաէներգիայի օրական արտադրությունը՝ գումարած ԱԱՀ, եթե կիրառելի է, կամ</p> <p>-բ. Երաշխավորել ՌԵՆԿՈՅԻՆ համապատասխանեցնել սակագինը հաջորդ սակագնային ժամանակահատվածի համար այնպես, որ նախորդ դրույթում նշված գումարը փոխհատուցվի 12 ամիս ընդգրկող ժամանակահատվածում՝ համապատասխանեցման պահից հաշված:</p> <p>- Փոխհատուցումը չի կիրառվում Ֆորս-մաժորի դեպքում: Ֆորս-մաժորի հանգամանքները մանրամասն կսահմանվեն ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ:</p> <p>գ) Եթե ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ չի հետևում ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ողջ գնման իր պարտավորություններին, ապա ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է կամ՝</p> <p>-ա. Երաշխավորել ՌԵՆԿՈՅԻՆ փոխհատուցման վճարում, որը հավասար է 0.0212 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր կՎտժի համար՝ անգամ էներգետիկ հաշվեկշռով նախատեսված օրական արտադրանքի կորուստը՝ գումարած ԱԱՀ կամ</p> <p>-բ. Երաշխավորել ՌԵՆԿՈՅԻՆ համապատասխանեցնել սակագինը հաջորդ սակագնային ժամանակահատվածի համար այնպես, որ նախորդ դրույթում նշված գումարը փոխհատուցվի 12 ամիս ընդգրկող ժամանակահատվածում՝ համապատասխանեցման պահից</p>	<ul style="list-style-type: none"> - b. to guarantee to RENCO to adjust the tariff for the next tariff period in such a way, that the amount mentioned in previous clause will be compensated in 12 months period from the moment of adjustment. - The compensation will not be applicable in case of Force majeure. The Force majeure event will be defined in details in the Contract. <p>f) In case the GOVERNMENT doesn't comply with its obligations concerning the fully purchase of the electric energy that could be produced by the POWER PLANT, the GOVERNMENT undertakes either</p> <ul style="list-style-type: none"> - a. to guarantee to RENCO the payment of compensation equal to 0.0212 USD for each KWhour x daily of production loss envisaged in the energy balance, plus VAT, or - b. to guarantee to RENCO to adjust the tariff for the next tariff period in such a way, that the amount mentioned in previous clause will be compensated in 12 months period from the moment of adjustment.
---	---

<p>հաշված:</p> <p>- Փոխհատուցումը չի կիրառվում Ֆորս-մաժորի դեպքում: Ֆորս-մաժորի հանագամանքները մանրամասն կսահմանվեն ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ:</p> <p>ե) Եթե ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ չի հետևում ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ կողմից արտադրված էլեկտրաէներգիայի համար վճարման իր պարտավորություններին՝ սույն ՓՀ-ով, Պայմանագրով և թողարկվող հաշիվ-ապրանքագրերով սահմանված վճարման պայմաններին համապատասխան, ապա ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է ուղղակիորեն վճարել ամբողջ չվճարված գումարը 60 օրվա ընթացքում՝ թողարկված և չվճարված հաշիվ-ապրանքագրերի ժամկետի լրանալու ամսաթվից հաշված:</p> <p>ը) Եթե ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ չի հետևում գազի մատակարարման իր պարտավորություններին՝ ոչ ՌԵՆԿՈՅԻ մեղքով, և գազի մատակարարման բացակայությունը կամ անբավարար մատակարարումը շարունակվում է կուտակային սկզբունքով ավելի քան 180 օր օրացուցային տարվա ընթացքում կամ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի համար վճարման և/կամ գնման բացակայությունը շարունակվում է կուտակային սկզբունքով ավելի քան 180 օր օրացուցային տարվա ընթացքում՝ լինի դա ֆորս-մաժորի հետևանքով կամ որևէ այլ պատճառով, ապա ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, եթե</p>	<p>- The compensation will not be applicable in case of Force majeure. The Force majeure event will be defined in details in the Contract.</p> <p>g) In case the GOVERNMENT doesn't comply with its obligations concerning the payment of the electric energy produced by the POWER PLANT, in compliance with the condition of payment stated in this MOU, in Contract and in the Invoices that will be issued, the GOVERNMENT undertakes to pay directly all the sum unpaid within 60 days from the date of expiry of the issued Invoices unpaid.</p> <p>h) If the GOVERNMENT doesn't comply with its obligations concerning the gas supply due to no fault of RENCO and absence of supply or the insufficient supply of gas continues cumulatively more than 180 days during calendar year or the non-payment and/or purchase for the electric energy producible by the POWER PLANT continues cumulatively more than 180 days during calendar year, whether it is caused by Force Majeure or any other reason, the GOVERNMENT, except for a different agreement between the Parties, undertakes to buy from RENCO the POWER PLANT, at a price equal to the reasonable construction cost that will be documented by RENCO and in any case</p>
---	--

<p>կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն, պարտավորվում է ՌԵՆԿՈՅԻՑ ձեռք բերել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ կառուցման ողջամիտ արժեքին հավասար գնով, որը փաստաթղթերով կձևակերպվի ՌԵՆԿՈՅԻ կողմից և ամեն դեպքում պակաս չի լինի 215.000.000 (երկու հարյուր տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլարից՝ գումարած ցանցերին միացման ծախսերը (որոնք կսահմանվեն համապատասխան փաստաթղթով), նվազեցված ընդհանուր գնի 5% չափով յուրաքանչյուր տարվա համար ՌԵՆԿՈՅԻ կողմից ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ յուրաքանչյուր ամբողջ տարի կառավարելու համար (գումարած ԱԱՀ, եթե կիրառվում է) և գումարած 15% և ԱԱՀ, եթե կիրառվում է:</p> <p>ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է ՌԵՆԿՈՅԻՆ փոխանցել ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ձեռքբերման ողջ գինը 12 (տասներկու) ամսվա ընթացքում (կամ այլ կարգով, որը կհամաձայնեցվի կողմերի միջև այս հանգամանքների դեպքում)՝ սկսած այն օրից, երբ գրանցվում է արտադրված էլեկտրաէներգիայի համար վճարման բացակայությունը՝ ԿՈՂՄԵՐԻ միջև պայմանավորված վճարման պայմանների համեմատ 180 (մեկ հարյուր ութսուն) օրը գերազանցող ուշացումով, և/կամ գրանցվում է գազի մատակարարման բացակայությունը կամ անբավարար մատակարարումը ժամանակաշրջանում, որը գերազանցում է 180 (մեկ հարյուր ութսուն) օրը, որը կարող է նաև կուտակվել յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում:</p>	<p>will be not less than 215.000.000 (two hundred fifteen million) USD, increased by the costs of connection to the networks (to be determined by an appropriate document), total reduced in amount of 5% of the whole price for each full year of operation of the POWER PLANT by RENCO (plus VAT when applicable) and the total further increased by 15% and plus VAT, when applicable. The GOVERNMENT undertakes to pay to RENCO the whole price of POWER PLANT purchase within 12 (twelve) months (or in another order to be agreed between the parties in case of these circumstances) from the date on which there is verified the non-payment for the produced electric energy with delay exceeding 180 (one hundred eighty) days compared with the payment conditions agreed upon between the PARTIES and/or the absence of supply or insufficient supply of gas for a period exceeding 180 (one hundred eighty) days, also cumulative, for each calendar year.</p>
--	---

<p>թ) ԿՈՂՄԵՐԸ պետք է համագործակցեն դեպի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ գազի մատակարարումը և էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացնելու նպատակով: Մասնավորապես, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ պետք է տրամադրի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ հանրային էլեկտրացանցին միացնելու կետերը, ինչպես նաև ապահովի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ համար գազի և ջրի մատակարարման միացումների նախապատրաստությունը՝ ՌԵՆԿՈՅԻ հաշվին:</p> <p>ԿՈՂՄԵՐԸ սույնով ընդունում են, որ նշված սակագինը, անկախ իրենց միջև ձեռք բերված պայմանավորվածություններից, ենթակա է կարգավորման Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (հետայսու՝ ՀԾԿՀ) կողմից: Հոդված 1-ով նախատեսված ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ստորագրման և նույն ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման օրվանից հետո ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԾԿՀ-ին ուղղված պաշտոնական նամակի միջոցով օրենքով թույլատրված չափով կաշակցի սակագնի ներառմանը ՌԵՆԿՈՅԻ արտոնագրում՝ սույն Հուշագրին համապատասխան ձևով (կասկածից խուսափելու համար՝ ներառյալ գազի գնի փոփոխության կամ ՀՀ դրամը ԱՄՆ դոլարին փոխարկման պաշտոնական արժեքի փոփոխության դեպքում սակագնի ցանկացած համապատասխանեցում):</p> <p>ժ) Եթե ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ չի կարողանում երաշխավորել սույն</p>	<p>i) The PARTIES shall collaborate in order to implement the supply of Gas to the POWER PLANT and the supply of electric energy. In particular, the GOVERNMENT shall provide the connection points of the POWER PLANT to the public electric network, and also the predisposition of connections for the supply of gas and water to the POWER PLANT at the expense of RENCO.</p> <p>The PARTIES hereby acknowledge, that the mentioned tariff, regardless the agreements between the Parties, are subject to regulation by the Public Services Regulatory Commission of the Republic of Armenia (hereinafter PSRC). To the extent permitted by Law, the Government after the date of signing of the CONTRACT provided by article 1 and the closing date of that CONTRACT through an official letter to PSRC shall support the inclusion of tariff in a manner consistent with this MOU (including for the avoidance of doubt any adjustment of the tariff in case of change of gas price or change in the official exchange rate for converting AMD into USD) in the license of RENCO.</p> <p>j) In case the GOVERNMENT isn't able to guarantee the respect of the price adjustment as provided by the present</p>
---	---

<p>հողվածով նախատեսված գների համապատասխանեցումը, ապա վերջինս պարտավորվում է ուղղակիորեն վճարել փաստացի կիրառված սակագների և պայմանագրով երաշխավորված սակագների միջև տարբերությունը՝ ՌԵՆԿՈՅԻ կողմից համապատասխան հայցը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում:</p> <p>Էլեկտրակայանի գործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմանագրերը պետք է գրանցվեն ՀԾԿՀ-ում:</p> <p>2. ՍՈՒՅՆ ՓՀ-Ի ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ</p> <p>Սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և լուծվում է հետևյալ իրադարձությունների տեղի ունենալու դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> - ՌԵՆԿՈՅԻ կողմից ուղարկված գրավոր ծանուցում սույն ՓՀ-ի ստորագրումից հետո 4 ամսվա ընթացքում, որով նա հրաժարվում է ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ կառուցումից: - Այն դեպքում, երբ Կողմերը կնքում են Գլուխ 1-ում նախատեսված ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: - Այն դեպքում, երբ ՌԵՆԿՈՅԻ կողմից իրականանալիության հաստատման ծանուցումից հետո 2 ամսվա ընթացքում չի ստորագրվում Գլուխ 1-ում նախատեսված ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ կամ չի իրականանում ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ստորագրման օրվանից հաշված 2 ամսվա ընթացքում: - Այն դեպքում, երբ սույն Հուշագրի ստորագրումից հետո 4 ամսվա ընթացքում ՌԵՆԿՈՅԻ կողմից որևէ 	<p>article, the GOVERNMENT undertakes to pay directly the difference between the actually applied tariffs and those guaranteed by the contract within 60 days upon receiving the related request on behalf of RENCO.</p> <p>All contracts required for POWER PLANT operation shall be registered in PSRC.</p> <p>2. DURATION AND ABROGATION OF THE PRESENT MOU</p> <p>The present MOU enters in force from the date of its signing and its termination may occur when one of the following events takes place:</p> <ul style="list-style-type: none"> - A written notification sent from RENCO within the term of 4 months from the date of signing the present MOU, communicating its refusal to implement the POWER PLANT. - In case the PARTIES conclude the CONTRACT provided by article 1. - In case the CONTRACT provided by article 1 is not signed within 2 months from the notification of confirmation of feasibility on behalf of RENCO or not closed within 2 months from the signing date of the CONTRACT. - In case no notification from RENCO is received within the term of 4 months from the date of signing the present MOU. - In case of mutual agreement between the PARTIES.
--	---

<p>ծանուցում չի ստացվում:</p> <ul style="list-style-type: none"> - ԿՈՂՄԵՐԻ փոխադարձ համաձայնության դեպքում: <p>3. ՆՈՐ ՀԻՄՆԱԴԻՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ</p> <p>«ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա.-ն կսկսի ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ կառուցումը հայկական նոր ընկերության հիմնադրման միջոցով, որը կմնա Էլեկտրակայանի սեփականատերը: Նոր Ընկերության որոշ բաժնեմասեր, բացի ՌԵՆԿՈՅԻՑ, կարող են պատկանել նախապես որոշված տեխնոլոգիական և ֆինանսական գործընկերներին, որոնք կմասնակցեն նախագծին:</p> <p>Նոր Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերը ամբողջությամբ կամ մասնակի կարող են վաճառվել տեխնոլոգիական և ֆինանսական գործընկերներին միայն Հայաստանի Հանրապետության Կառավարության համաձայնությամբ և ՈՐՈՇՄԱՄԲ, ընդ որում՝ նոր պոտենցիալ բաժնետերերի հետ ստորագրվելիք պայմանագրերի պայմանները հայկական կողմի համար չպետք է լինեն ավելի վատ, քան սույն ՀՈՇԱԳՐՈՎ և սույն Հուշագրի Գլուխ 1-ում նշված ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ սահմանված պայմաններն են:</p> <p>4. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ</p> <p>ՓՀ-ի ուժի մեջ լինելու ընթացքում առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող</p>	<p>3. TRANSFER OF THE CAPITAL SHARES OF NEW COMPANY TO BE ESTABLISHED UNDER ARMENIAN LAW</p> <p>Renco S.p.A. company will proceed to the realization of the POWER PLANT through the establishment of New Company under Armenian law which will remain the owner of the same POWER PLANT. Some shares of the capital stock of the above mentioned New Company can be held not only by RENCO but also by technological and financial partners, who are previously identified and who will participate in the project.</p> <p>All or part of shares of the capital stock of the New Company can be sold to technological and financial partners only with agreement of and upon DECREE of the GOVERNMENT of the Republic of Armenia, moreover, the terms and conditions of contracts to be signed with new potential shareholders shall not be worse for Armenian side than the terms and conditions of the present MOU and the terms and conditions of the CONTRACT mentioned in article 1 of the present MOU.</p> <p>4. CONFIDENTIALITY</p> <p>During the validity period of the present MOU, while transferring information containing commercial or other secrets, the PARTIES shall make notion about the confidentiality in the</p>
--	--

տեղեկատվություն փոխանակելիս, ԿՈՂՄԵՐԸ նշում են կատարում նշված տեղեկատվության գաղտնիք հանդիսանալու մասին համապատասխան փաստաթղթերում կամ քննարկումների ժամանակ, ինչի դեպքում նշված տեղեկատվությունը պահպանվում է համապատասխան գաղտնիքի մասին օրենսդրությամբ: Գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, Կողմերը համաձայնում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի խուսափեն երրորդ անձանց որևէ տեղեկություն բացահայտելուց:

5. ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն համաձայնագրի վավերականության, մեկնաբանության կամ իրականացման վերաբերյալ առաջացած վեճերը, որոնք հնարավոր չէ բարեկամաբար լուծել Կողմերի միջև, կենթարկվեն միակ միանձնյա արբիտրի վերջնական որոշմանը, որը կնշանակվի Փարիզի Միջազգային Առևտրային Պալատի Նախագահի կողմից կողմերից մեկի պահանջով: Դատավարությունը կլինի առանց ձևական ընթացակարգերի, իսկ որոշումը կլինի պարտադիր և անբեկանելի՝ նույն դատավորին լիազորություն տալով որոշում կայացնել խաղաղ և փոխզիջման ճանապարհով: Որոշումը պետք է թողարկվի 90 օրվա ընթացքում: Արբիտրաժի հետ կապված ծախսերը կողմերի միջև կբաշխվեն հավասարաչափ:

6. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սույն ՓՀ-ի առարկա հիմնական պայմանագիրը կնքելիս, բոլոր գները պետք է գնանշվեն ՀՀ դրամով պայմանագրի կնքման

relevant documents or during the negotiations. In that case the mentioned information will be protected (kept confidential) under the legislation regulating secrets of that kind. While realizing the requirements of the legislation in force, the PARTIES agree to undertake all the necessary measures to avoid any disclosure to third parties.

5. APPLICABLE LAW AND RESOLUTION OF THE CONTROVERSIES

Any controversy that may arise regarding the validity, interpretation and implementation of the present agreement that could not be possibly resolved in an amicable way between the PARTIES, will be submitted to the final decision of a sole arbiter who will be appointed by the President of the International Chamber of Commerce of Paris upon request of one of the Parties. The arbitration will be non-ritual and the arbitration award will be binding and irrevocable and the Arbiter will have the power to decide in the way of amicable settlement. The arbitration award shall be issued within 90 days. The Arbitration fees shall be equally divided between the parties.

6. CURRENCY CONTROL

When concluding the main CONTRACT subject to this MOU, all the prices shall be indicated in AMD in accordance with the currency at date of the signing of the CONTRACT, if the requirements of legislation then in force will be

<p>օրվա դրությամբ փոխարժեքի համապատասխան, եթե կնքման պահին գործող օրենսդրությունը դա կպահանջի: Այդ դեպքում, պայմանագրում կողմերը պետք է նախատեսեն փոխարժեքի հնարավոր տատանման հետ կապված գնի ինդեքսավորման մեխանիզմ, որը երաշխավորում է ՀՀ դրամից ԱՄՆ դոլար փոխարկման հնարավոր տատանման ամբողջական ծածկումը, երբ նման տատանումը տարեկան հիմքով գերազանցում է 2%, և ապահովում է ՌԵՆԿՈՅԻ մնալը նույն ֆինանսական դիրքում, որում կլինեք այդպիսի տատանման բացակայության դեպքում:</p> <p>7. ԷՔՍԿԼՅՈՒԶԻՎՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Սույն ՓՀ-ի գործողության ողջ ընթացքում ՀՀ Կառավարությունը պարտավորվում է չքանակցել և պայմանագիր չկնքել որևէ երրորդ անձի հետ սույն ՓՀ-ի առարկա էլեկտրակայանի իրականացման համար, իսկ այդպիսին անելու դեպքում պարտավոր է ՌԵՆԿՈՅԻՆ հատուցել բոլոր վնասները, որը սակայն կողմերի համաձայնությամբ կկազմի առնվազն 5.375.000 ԱՄՆ դոլար</p> <p>8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ</p> <p>ՓՀ-ի նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ Օրենսդրությունը:</p> <p>Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով նույնական տեքստերից երկու օրինակից: Մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին: Տարբեր լեզուների միջև հակասությունների առաջացման դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով տեքստին:</p> <p>Սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում Կառավարության կողմից հաստատման,</p>	<p>so. In that case, the parties shall provide in the CONTRACT an indexation mechanism for the possible fluctuation of the currency that guarantees the complete covering of possible fluctuation of the exchange rate for converting AMD into USD, when such fluctuation is more than 2% on the annual basis, to ensure that RENCO remains in the same financial position as it would have been in the absence of such fluctuation.</p> <p>7. EXCLUSIVITY</p> <p>During the operation of this MOU, RA Government undertakes not to negotiate and not to conclude an agreement with any third party for the realization of the POWER PLANT subject to this MOU, and in case of violation of this provision it shall recover all the damages to RENCO which by agreement of Parties is in any case not less than 5.375.000 USD.</p> <p>8. MISCELLANEOUS</p> <p>The law applicable to the MOU is the Armenian Law.</p> <p>This CONTRACT is made in identical texts in Armenian and English languages in two copies. Each party is given a copy. In case of discrepancies between Armenian and English texts, English text will prevail.</p> <p>This MOU shall enter into force upon its approval by the RA GOVERNMENT as well as by the Board of Directors of RENCO, about</p>
--	--

<p>ինչպես նաև ՌԵՆԿՈ ընկերության տնօրենների խորհրդի կողմից հաստատման փաստով, որի վերաբերյալ Կողմերը պաշտոնապես կծանուցեն միմյանց:</p> <p>Կարդացված է, հաստատված է և կնքված է _____, _____:</p>	<p>which the Parties shall officially notify each other.</p> <p>Read, approved and undersigned in _____, on _____</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ